ՀԱՆՐԱՅԻՆ
ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

**N-ՀՄ-02/46/26**
**«10» փետրվար 2026թ.**

**«Մեծ Ծիածան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը**

ՀՎՀՀ 00103837
Հասցե՝ ք. Երևան, Վ. Համբարձումյան 91,
հեռ.՝ +37410323324,
էլ. հասցեն՝ ciacangnumner@gmail.com

**Ծ Ա Ն Ու Ց Ու Մ**

**ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/5-10 ծածկագրով**

**Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին**

**«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության** կարիքների համար 2025 թվականի նոյեմբերի 26-ին հայտարարված տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով իրականացված «ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/5» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 26-րդ չափաբաժնի համար ընտրված մասնակից է ճանաչվել «Մեծ Ծիածան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը:

Վերոնշյալ մրցույթի շրջանակներում **«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության** (այսուհետ՝ Գնորդ) և «Մեծ Ծիածան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Վաճառող) միջև 2026 թվականի հունվարի 08-ին կնքվել է **«ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/5-10»** ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր) և 2026 թվականի հունվարի 12-ին կնքվել է ֆինանսական միջոցներ նախատեսվելու վերաբերյալ համաձայնագիր:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի (լրիվ կամ մասնակի) լուծել պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Հաշվի առնելով 2026 թվականի փետրվարի 06-ին «Մեծ Ծիածան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված գրությունը, ըստ որի ընկերությունը հրաժարվում է մատակարարել ապրանքը և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7-րդ կետը «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը միակողմանի լուծում է վերոնշյալ Պայմանագիրը:

Առաջնորդվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետի պահանջներով՝ առաջարկում ենք 10 (տասը) օրացուցային օրվա ընթացքում վճարել որակավորման 49,500 (քառասունինը հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ և պայմանագրի 33,000 (երեսուներեք հազար) ՀՀ դրամ ապահովումները «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության **2050022082671001** հաշվեհամարին:

Հայտնում ենք, որ «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը իրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Միաժամանակ հիշեցնում ենք, որ «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասն օրացուցային օրվա ընթացքում:

Ընդ որում, եթե՝

- լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է պայմանագրի և որակավորման ապահովման վերը նշված գումարները («Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերության 2050022082671001 հաշվեհամարին), ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.

- մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից պայմանագրի և որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

Ամփոփելով վերոգրյալը, հայտնում ենք նաև, որ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կկիրառվեն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Առդիր՝ 31 (երեսունմեկ) էջ:

Հարգանքով՝

**Գործադիր տնօրեն՝** **Հովհաննես Մովսիսյան**


Կատարող՝
Գնումների կազմակերպման բաժնի պետ՝
Լիլիթ Ղազարյան
Հեռ. 010 65.00.15 (157)